

ք.եղեգնաձոր

18.01.2016թ.

ՁՈՎԱԾ ԿԱՄ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԴԱՐՁԱԾ ԶԻՆ. ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾԱՎԱԾ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ

Նիստի աշխատանքներին մասնակցում են՝ փոխմարզպետ, հանձնաժողովի նախագահ Մ.Հարությունյանը հանձնաժողովի անդամներ՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա.Գրիգորյանը, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Խ.Գևորգյանը, քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Ռ.Մինասյանը, ՀՀ Վայոց ձորի մարզի մարզպետի խորհրդական Վ.Ասլանյանը, ՀՀ Վայոց ձորի մարզի եղեգնաձոր համայնքի քաղաքապետի տեղակալ Վ.Ավագյանը, Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Գ.Թադևոսյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ն.Սիմոնյանը, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առաջատար մասնագետ Յ. Բաբայանը / քարտուղար/:

Բացակայում է Վայոց ձորի մարզի ԵԿՄ նախագահ Թ.Ավետյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Ջերմուկի քաղաքապետարանի կողմից հերթագրված Արսեն Աբաղյանի գործը 2015թվականի հերթացուցակում ընդգրկելու վերաբերյալ:

2. ՀՀ կառավարության 09.06.2005 թվականի թիվ 947-Ն որոշման հիման վրա ՀՀ ՊՆ 20.03.2014 թվականի թիվ 267 հրամանով ստեղծված հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված /մահացած/ զինծառայողների ընտանիքներին, նրանց հավասարեցված անձանց անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրող հանձնաժողովի 11.12.2015թ նիստի որոշումը Հազարապետ Աղախանյանին հերթացուցակից հանելու վերաբերյալ:

3. 2015 թվականի հերթացուցակներում կատարված փոփոխությունները:

Լսեցին՝ Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց Արսեն Աբաղյանի գործը:



Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց որ, 2003-2015թվականների բոլոր գործերը 2005թ. հունիսի 9-ի 947-Ն որոշման պահանջներին համապատասխան ուսումնասիրվել և շտկվել են առկա թերությունները, հերթագրումը համապատասխանեցվել է գործում առկա համայնքապետարանների բնակարանային պայմանների ստուգման ակտերին:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Արսեն Աբաղյանին ընդգրկել 2015թվականի հերթացուցակում և ներկայացնել ՀՀ ՊՆ-ԶՍՊ վարչություն:

2. Հազարապետ Աղախանյանին գրավոր տեղեկացնել ՀՀ ՊՆ հանձնաժողովի որոշման մասին:

2. 2015 թվականի հերթացուցակը ներկայացնել ՀՀ ՊՆ:

Հանձնաժողովի նախագահ  Մ.Հարությունյան
Քարտուղար  Յ.Բաբայան